

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՈՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երաժշտական արվեստը վաղեմի պատմություն ունի: Դեռևս քարե դարում մարդիկ սկսել են պատրաստել առաջին երաժշտական պարզունակ գործիքները: Յետագայում, մարդկային լեզվի ու մտածողության զարգացման հետ մեկտեղ, զարգացել ու կատարելագործվել է երաժշտական արվեստը: Մեր թվարկությունից հազարավոր տարիներ առաջ մարդիկ ստեղծել են քնարական, ինչպես նաև մոգական երգեր՝ ուղղված բնության ուժերին: Թեև այդ երգերի արտահայտչամիջոցներն աղքատ էին և ոչ կատարյալ, սակայն դրանք մարդկության, նրա մշակույթի, մտածողության և գեղարվեստական երևակայության խոշոր ծերքերումներ էին¹: Այսպիսով, երգեցողությունը ծագել ու զարգացել է այն ժամանակ, երբ նախնադարյան մարդն ի վիճակի է եղել հնյուններ արտաքերել և մասնաւելով հնյունների հոսքը՝ տարբեր ձևերով վերախմբավորել մասնատված միավորները²:

Բնական է, որ մարդկային այդ նախնական մեղեդիները պարզունակ էին և ավելի ծշգրիտ էին արտացոլում խոսքի հնչերանգը: Յետագայում երաժշտական մեղեդին դարձավ ավելի արտահայտիչ՝ շնորհիվ լադային (լածուայ) կառուցվածքի, ոիթմի և տեմպի փոփոխությունների: Այնուհետև ստեղծվեցին երաժշտական համակարգեր, կատարելագործվեցին երաժշտական գործիքները, երգային ձայներն ու նրանց կատարումները³:

Լեզվական ու երաժշտական համակարգերի փոխհարաբերությունների մասին արժեքավոր մտքեր է արտահայտել ֆրանսիացի մեծ մտածող, լուսավորիչ և համրագիտակ ժան ժակ Ռուսոն դեռևս 18-րդ դարում: Նա իր գործունեությամբ մեծ հետք է բռնել ֆրանսիական երաժշտության պատմության մեջ որպես կոնյունկտոր և որպես երաժշտագետ: Մեծ արժեք է ներկայացնում նրա հրատարակած «Երաժշտական բառարանը», որը դեռևս շարունակում է գործածվել:

Սույն հոդվածում ներկայացվում են երաժշտության մասին Ռուսոյի այն մտքերը, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ռուսոյի կարծիքով՝ հնչող խոսքն ամենից առաջ ծառայում էր կրքեր ու զգացմունքներ արտահայտելուն: Խոսքի հիմքը նա համարում էր այն

¹ Տես **Ռօզենշայլ Կ.** Իстория зарубежной музыки. М., 1973, էջ 7:

² Ենգելի կարծիքով՝ դա հնարավոր դարձավ այն ժամանակ, երբ «կապկի անգարգացած կոկորդը մողուցացիայի միջոցով դանդաղ, բայց անշեղորեն փոխակերպվում էր ավելի ու ավելի զարգացած մողուցացիայի համար, իսկ բերանի օրգաններն աստիճանաբար սովորում էին հոդաբաշխ հնյուններն արտասանել մեկը մյուսի հետևից» (Ֆ. Ենգելս, Բնության դիալեկտիկա, Եր., 1969, էջ 170):

³ Տես **Ռօզենշայլ Կ.**, նշվ. աշխ., էջ 8:

հնչերանգառիթմային տարրերը, որոնցով խոսքն առնչվում էր երաժշտությանը: Ահա թե նա ինչպես է բնութագրում խոսքի հնչերանգը. «Խոսքի հնչերանգը՝ ըստ արտահայտվող կրթերի կարող է տարրեր լինել. այն կարող է լինել մերթ կտրուկ ու կրծոտ, մերթ թույլ ու թոշնած, մերթ տարատեսակ ու հաստատակամ, մերթ հավասար ու հանդարտ, որից էլ երաժիշտը քաղում է ձայնի համար տարրեր մեղեդիներ ու ձայնասահմաններ (բերդաբարձր): Թախիծի հոգեմաշուրջուն արտահայտելու համար երգչի ձայնը շարժվում է փոքր միջակայքերով դեպի ստորին ձայնասահման, մինչդեռ վիշտ ու պողքելով արտահայտելու համար երգիչը դիմում է իր ձայնածավալի բոլոր միջակայքերին՝ դրանցից քաղելով բարձր ու կտրուկ հնչյուններ՝ պատկերելու համար ուժեղ վիշտություն կամ հակասող կրթերի պայքար: Կարևոր է հիշել, որ երաժշտության հրապուրը ոչ թե սոսկ ընդօրինակելու, այլ «հաճելին» ընդօրինակելու մեջ է, և որ ուժեղ տպավորություն թողնելու համար անհրաժեշտ է, որ ասմունքը (ճեկամագիա) ենթարկվի մեղեդուն. անհնար է պատկերել զգացմունքն առանց դրանից անբաժան գաղտնի հնայքի, քանի որ անհնար է հուզել սիրտը՝ առանց լսողությունը շոյելու, և այս ամենը բնության մենաշնորհն է, որը զգայուն մարդկանց ձայնն օժտում է անբացատրելի սրտառուց ու հնայիչ հնչերանգներով, որոնք անհասանելի են կոշտ հոգիներին»⁴:

Այսպիսով, Ուստոն երաժշտության սկզբնաղբյուրը համարում էր խոսքի հնչերանգը («առողանությունը»), որը ոչ միայն երաժշտի ընդօրինակման անմիջական օրիեկտն էր, այլև այն պատմական հենքը, որի վրա զարգացել էր երաժշտությունը:

Ուշադրության կենտրոնում դնելով բանավոր խոսքը՝ նա փորձում էր գուգահեններ անցկացնել լեզվական ու երաժշտական համակարգերի միջև: Նրա կարծիքով՝ բանաստեղծությունը, երգը և խոսքը նույն ծագումն ունեն, և որ ձայնի առաջին հնչյունների հետ մեկտեղ՝ ծագել են առաջին երաժշտական տոները (էջ 251):

Անդրադասնալով լեզվի ու երաժշտության փոխհարաբերության հարցերին՝ նա գրում է. «Երբ «կրօոտ» լեզուն դառնում է խելային (рассудочны), և լեզվի բանավոր ձևը զիջում է գրավորին, լեզվական տարրերը դառնում են դժույն. Երաժշտական հնչյունները (ձայնավորները) կուլ են գնում արտաքրվող աղմուկին (բաղաձայններին)» (էջ 263): Այստեղ Ուստոն տեսնում է խոսքի այլասերումը: Լեզվի մեղեդային հատկանիշների կորուստը համգեցնում է նաև երաժշտության ննանատիպ այլասերման, քանի որ այստեղ էլ է մեղեդին դուրս մղվում աղմուկով՝ հարմոնիայով: Այսպիսով, զարգացած լինելով նույն սկզբնաղբյուրից՝ խոսքն ու երաժշտությունը հեռանում են միմյանցից, և երկուսն էլ տանուլ տալիս (էջ 263):

Ի հակադրություն լեզվի խելային ընկալման՝ Ուստոն կարևորում էր խոսքի հուզականությունն ու պատկերավորությունը, որը նա արդարացնում պայմանավորում էր հնչերանգով: Առաջին պլան մղելով խոսքի բանաստեղծայնությունն ու երաժշտայնությունը՝ նա Վ. Յունբոլդից ու Ա. Պոտերնյայից ավելի վաղ էր ապացուցում խոսքի պատկերավորության ա-

⁴ Руссо Ж.-Ж. Избранные сочинения. Т. I. М., 1961, с. 269 (այսուհետ այս գրքի հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ, միայն էջը):

ռաջնային լինելը: Այսպիսով, Ռուսոն դեռևս 18-րդ դարում կարևորեց լեզ-վի գեղագիտական գործառությը, որին Բ. Կրոչեն, Կ. Ֆուլերը և Ռ. Բուդա-ռովը անդրադարձան միայն 20-րդ դարում:

Դամաձայն Ռուսոյի ուսանունքի՝ «Ամեն մի երաժշտություն կարող է բաղկացած լինել հետևյալ երեք տարրերից՝ մեղեդուց, հարմոնիայից և չափից: Մեղեդու բնույթը հիմնականում ստեղծվում է չափով: Չափը մեղե-դու համար նույն դերն է կատարում, ինչ շարահյուսությունը՝ խոսքի հա-մար: Չափով են պայմանավորված մեղեդու գեղեցկությունն ու արտա-հայտչականությունը: Դարմոնիան ընդհանուր է բոլոր ժողովուրուների հա-մար: Եթե այնտեղ կան տարբերություններ, ապա դրանք բխում են մեղե-դուց: Այսպիսով, միայն մեղեդու միջոցով կարելի է որոշել ամեն մի ազգա-յին երաժշտության բնույթը, առավել ևս որ այն տրված է լեզվում, և դրա համար էլ մեղեդին՝ իբրև այդպիսին, պետք է կրի լեզվի մեծագույն ազդե-ցությունը» (էջ 184): Զարգացնելով այս միտքը՝ Ռուսոն ավելացնում է. «...ամեն մի ազգային երաժշտություն իր բնույթը հիմնականում փոխա-ռում է լեզվից...», իսկ «...այդ բնույթը գլխավորապես բացահայտվում է առողջանության միջոցով» (էջ 184):

Դեռևս 18-րդ դարում Ռուսոն քաջ գիտակցում էր բանահյուսական ճարտարվեստի (сюовесная բиրтуозность) դերը, որն ընկած է երաժ-տության արտահայտչականության հիմքում, որի պատճառով էլ նա մեծ կարևորություն էր տալիս մեղեդուն. «Մեղեդին, ընդօրինակելով ծայնի ելեցները, արտահայտում է բոլոր, ծիչ, տառապանք կամ ուրախություն, սպառնալիք, հառաջանք. կրքերի բոլոր վոկալ նշանները նրան են վերա-բերում: Այն ընդօրինակում է լեզվի հնչերանգը և այն բոլոր դարձերը, ո-րոնք յուրաքանչյուր անվանման մեջ համապատասխանում են հոգու որո-շակի շարժերին, այն ոչ միայն ընդօրինակում է, այլև խոսում, և նրա անհո-դարաշխ, բայց կենդանի, կրակոտ և կրքոտ խոսքում հարյուր անգամ ա-վելի շատ եռանդ կա, քան սովորական խոսքում: Ահա, թե որտեղից է գա-լիս երաժշտական ընդօրինակումների ուժը. ահա թե ինչո՞ւ է երգեցողութ-յունն իշխում զգայուն սրտերի վրա» (էջ 256): Այնուհետև նա ավելացնում է. «Բոլոր երաժշտական մեղեդիները նույնպես հնչերանգներ են» (էջ 227):

Ռուսոյի արտահայտած այս մտքերն անշափ արժեքավոր են և վկա-յում են այն մասին, որ մեծ գեղագիտական ներգործության կարելի է հաս-նել՝ ստեղծելով այնպիսի երաժշտություն, որն ընդօրինակի խոսքային ծայնի ինաստավորված ելեցները:

Փնտրելով երաժշտական ներդաշնակություն մարդկային խոսքում՝ նա հարմոնիան համարում էր միջնադարում ստեղծված «բարբարոսա-կան» կամ «գորական» հայտնագործություն՝ միաժամանակ հնչող ծայնե-րի միասնությամբ, և այս միտքը նա հիմնավորում էր հետևյալ ձևով. «Դար-մոնիան, կապանքներ դնելով մեղեդու վրա, նրանից խլում է նրա ուժն ու արտահայտչականությունը, թուլացնում կրքոտ հնչերանգը և փոխարի-նում այն բարեհնչյուն միջակայքով, մեղեդիները ենթարկում է միայն երկու լադի՝ մաժոր և մինոր, այն դեպքում, եթե դրանք պետք է լինեն այնքան, որքան որ տարբեր տոներ ունի ճարտասանը: Դարմոնիան խլացնում ու ոչնչացնում է բազմաթիվ հնչյուններ և միջակայքեր, որոնք չեն մտնում նրա համակարգի մեջ: Մի խոսքով, հարմոնիան այնքան է հեռացնում եր-

գեցողությունը խոսքից, որ այդ երկու լեզուները մտնում են պայքարի և հակադրության մեջ, խլում մեկը մյուսից ճշմարտացիությունը և չեն կարողանում միավորվել պարոսով լի բռվանդակության մեջ՝ չընկնելով անհեթերության գիրկը» (էջ 256): Ահա թե ինչու էր Ռուսոն նախընտրում միաձայն երաժշտությունը և այդպիսի մեծ կարևորություն տալիս մեղեդուն, իսկ հարմոնիային վերագրում էր միայն օարդարանքի դեր: Մեղեդին է, որ ընդօրինակում է խոսքի հնչերանգը, որը **լեզվի և երաժշտության միակ և հիմնական կապող օղակն է:**

Ըստ նրա՝ խոսքային մեղեդին, որն արտահայտում է բնական զգացմունքներ, իր մեջ կրում է երաժշտական բարեհնչյուն միջակայքեր: Այս առումով հին հունարենը Ռուսոյի համար օրինակելի լեզու էր իր որոշակի երաժշտական, ռիթմային և լադային կազմավորմամբ: Այդ լեզվի երկար ու կարծ վանկերի տարրերությանը Ռուսոն վերագրում էր մաթեմատիկական ճշգրտություն, որն իրականում դրանք ձեռք էին բերում միայն բանաստեղծության մեջ: Նա հին հունարենի շեշտադրությունը հավասարեցնում էր երաժշտական բարեհնչյուն միջակայքերի քայլերին (էջ 274): Այդ լեզվի մասին գրում է: «Հունարենը՝ իր բնական ներդաշնակությամբ և երաժշտականությամբ, ուներ մեղեդային հնչերանգներ, և որպեսզի հունարենի հնչերանգը դառնար երաժշտական, հարկավոր էր նրան միայն ռիթմայնություն հաղորդել» (էջ 288): Շարունակելով այս միտքը՝ նա գրում է, որ հունարենում կային շատ մեղեդային հնչերանգներ, որի պատճառով էլ ամբողջ պոեզիան երաժշտական էր, իսկ ամբողջ երաժշտությունը՝ ասմունքային, այնպես որ հույների երգեցողությունը, հավանաբար, միայն երգեցիկ խոսք էր, և նրանք իրոք երգում էին իրենց բանաստեղծությունները (էջ 274):

«Պոեզիայի երգեցիկության» տակ Ռուսոն նկատի ուներ բանահյուսական ճարտարվեստը, որը իին հույների մոտ իր կատարելությանն էր հասել ռիթմի և առոգանության կազմակերպմամբ, իսկ «Երաժշտության ասմունքայնությունը» պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ռուսոն երաժշտության մեջ նախապատկիրյունը տալիս էր «լոգոս»-ին:

Այսպիսով, Ռուսոն լոգոցենտրիզմի կողմնակից էր և երաժշտությունը խոսքից սերելու ուսմունքի նախահայրը: Նրա կարծիքով՝ երաժշտությունը մարդկանց սրտերը հուզելու լեզուն է, որը սերտ կապի մեջ է լեզվի հետ, և երաժշտությունը հուզում է սիրտը միայն մեղեդու հմայքի շնորհիվ (էջ 287):

Երաժշտության մեջ առաջին պլան մղելով արտահայտիչ «խոսող» սկիզբը, Ռուսոն փորձում էր երաժշտությունը հնարավորինս մերձեցնել խոսքին, հետևաբար նրա համար այն երաժշտությունն էր ընդունելի, որն ավելի մոտ էր խոսքի հնչերանգին և առավել ծշգրիտ էր արտացոլում այս կամ այն լեզվի առոգանությունը:

Սակայն Ռուսոն ուշադրություն էր դարձնում երկու համակարգերի միջև գոյություն ունեցող ոչ միայն ննանություններին, այլև տարբերություններին: Նրա կարծիքով՝ երաժշտական և խոսքային հնչյունների միջև եղած տարբերությունն այն է, որ երաժշտական հնչյունները տևական են (soutenus), այսինքն՝ ձգվում են որոշակի ժամանակահատվածում՝ առանց բարձրության ու ուժգնության փոփոխության: Միևնույն ժամանակ նրանք

որոշակի ձայնաբարձ (զվոկօվիսոտիկ) փոխհարաբերությունների մեջ են, որը նրանց դարձնում է ներդաշնակ: Այստեղից էլ միտք է ծագում «տևական ասմունքի» մասին, որտեղ ամեն մի հնչյուն «տևական» է վերը նշված իմաստով: Այդ ասմունքի վաճակների տևողության ու բարձրության ճշգրիտ հարաբերությունները ստեղծում են ռիթմային և մեղեդային պատկեր, որը մոտենում է երգեցողությանը (էջ 274):

Ոուսոն հետաքրքիր մտքեր է արտահայտել նաև վոկալ երաժշտության և օպերայի մասին: Այս առիթով նա գրում է. «Վոկալ երաժշտությունը շատ ավելի վաղ է ծագել, քան գործիքայինը, որն իր մերեղային դարձերն ու չափերը քաղել է վոկալ երաժշտությունից: Վոկալ երաժշտության տարբեր չափերի համար սկզբնաղբյուր են ծառայել խոսքի շեշտաչափման (скандировование речи) տարրեր միջոցները և երկար ու կարծ հնչյունների փոխադարձ դասավորությունը: Սա միանգամայն ակներև է հունական երաժշտության մեջ, որտեղ բոլոր չափերը ոչ այլ ինչ են, քան բազմազան ռիթմային բանաձևեր, որոնք կազմված են այդ լեզվին և նրա պոեզիային հատուկ երկար ու կարծ վաճակների և ոտքերի զուգորդումներից: Չնայած երաժշտական ռիթմի մեջ հեշտությամբ կարելի է տարբերակել առողջանության, բանաստեղծության և մեղեդու չափերը, այնուամենայնիվ ամենահաճելին և ռիթմայինը կլինի այն երաժշտությունը, որտեղ այդ երեք չափերը զուգակցված են կատարյալ ձևով» (էջ 184):

Լինելով մեծ գեղագետ՝ լիակատար ներդաշնակության հասնելու համար Ոուսոն ձգտում էր վոկալ երաժշտության մեջ երաժշտական ռիթմը զուգակցել խոսքային և բանաստեղծական ռիթմին: Ներդաշնակության հասնելու նրա այդ ձգտումը նկատելի է նաև օպերայի ժամրում:

Ոուսոյի համար օպերան «դրամատիկ ու լիրիկական ներկայացում է, որը փորձում է կրօպվ լի գործողության մեջ միավորել բոլոր նրբագեղ արվեստների թուչանքը, որպեսզի հաճելի զգացողությունների միջոցով ստեղծի հետաքրքրություն և պատրանք» (էջ 273): Այս առիթով գրում է. «Բոլոր զգացունքների ուժգնություն և բոլոր կրթերի կրակուտություն. ահա օպերայի գլխավոր նպատակը» (էջ 278):

Համեմատելով խոսքային և երաժշտական այդ ժամրի հնչյուններ՝ Ոուսոն գրում է. «Եթե խոսքային հնչյունները տևական ու ներդաշնակ չլինեն, ապա դրանք անորոշ կլինեն և դրա համար էլ չեն կարող հաճելիորեն զուգակցվել երգող ձայնի հնչյունների ու գործիքների հետ» (էջ 273):

Այս մտքերը վկայում են այն մասին, որ Ոուսոն դեռևս 18-րդ դարում լուրջ ուշադրություն էր դարձնում խոսքային և երգային հնչյունների միջև գոյություն ունեցող տարրերություններին և կարևորում էր վոկալ հնչյունաբանության (вокальнаа фонетика) դերը երգեցողության մեջ, որին երաժշտագետներն անդրադարձան միայն 20-րդ դարում:

Հետաքրքրական են նրա դաստողությունները ասերգի՝ խոսքի և երգեցողության միջև գոյություն ունեցող միջանկյալ օղակի մասին: Ոուսոյի կարծիքով՝ «Ասերգը ներդաշնակեցված ասմունք է, որտեղ ձայնը շարժվում է ներդաշնակ միջակայքերով: Հետևաբար, եթե յուրաքանչյուր լեզվում կա ասմունք, ապա այն պետք է ունենա իրեն բնորոշ ասերգը» (էջ 206):

Օպերայի ժամրում ասերգի ներմուծումը Ոուսոն հիմնավորում է հետևյալ կերպ.

1) քնարական դրամաներում ասերգը կապակցում է գործողությունները և պիեսը դարձնում ամբողջական,

2) ստվերարկում է միջյանց հաջորդող արիաները, այլապես դրամը անտանելի կլինեին,

3) ավելի շատ մտքեր է արտահայտում, որի հնարավորությունը չի տալիս չափի մեջ գտնվող երգեցիկ երաժշտությունը:

Ուսույի կարծիքով՝ ստվերական ասմունքը չի կարող այդ գործը կատարել, քանի որ անցունը խոսքից երգեցողությանը և հատկապես երգեցողությունից խոսքին՝ պարունակում է լսողության համար տիած կոպտություն, որը խաբարում է պատրաճն ու հետաքրքրությունը: Միայն ասերգն է խոսքին տալիս այդպիսի միատարրություն, և որ ցանկացած լեզվում այն ասերգն է ընդունելի, որի մեջ **խոսքն ու երաժշտությունը ներդաշնակ են** (էջ 293):

Ուսուն նաև անդրադարձել է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են չափը, ռիթմը և տեմպը: Նրա կարծիքով՝ չափը տակտի մասերի պարբերական կրկնությունն է, մինչդեռ ռիթմը՝ տևողությունների որոշակի միասնությունը: Հնարավոր է չափն առանց ռիթմի, քայլ ոչ՝ ռիթմն առանց չափի: Համեմատելով ռիթմը հարմոնիայի հետ՝ նա հանգում է այն եզրակացության, որ ռիթմն առանց հարմոնիայի ավելի ուժեղ ազդեցություն է թողնում հոգու վրա, քան հարմոնիան առանց ռիթմի: Ուսուն գտնում էր, որ հարմոնիան ակորդների հաճելի հնչողությունն է, որը մեղեդու միջակայքերին հաղորդելով ճշգրտություն ու հստակություն, ուժեղացնում է արտահայտչականությունը: Հարմոնիան կենդանություն է պարզեցն այդ միջակայքերի հնչողությանը, ճշշտ մատնանշում դրանց տեղը մոդուլյացիայում (в модуляции), իիշեցնում նախորդը և ազդարարում հաջորդը. այսպիսով՝ ասույթները երաժշտության մեջ կապակցում է այնպես, ինչպես մտքերն են կապակցվում խոսքում (էջ 269):

Նախապատվությունը տալով մեղեդուն՝ Ուսուն խնդիր էր դրել պարզելու, թե որքանով բանավոր խոսքը կարող է երգել, իսկ **երաժշտությունը՝ խոսել**, քանի որ դրա ճշշտ որոշումից էր կախված դրամատիկ երաժշտության ողջ տեսությունը: Ըստ այդմ՝ նա գտնում էր, որ դրամայում երաժշտությունը հարկավոր է զանազանակերպել. մերթ առաջին պլան մղել խոսքի հնչերանգն ու բանաստեղծական ռիթմը, մերթ երաժշտությունը՝ շռայլելով նրա վրա մեղեդու, հարմոնիայի և երաժշտական ռիթմի ողջ հարատությունը՝ զարմացնելու լսողությունը և հուգելու սիրտը անհարթահարելի թովչանքով (էջ 289):

Օպերայի ժամրում արտահայտչականության հասնելու համար Ուսուն առաջարկում էր ռիթմի, չափի, տեմպի և ուժգնության, ինչպես նաև, տոնայնությունների, ձայնասահմանների և դադարների ներքին հակադրություն: Նրա կարծիքով՝ դադարներն ավելի մեծ ազդեցություն են թողնում, քան ասմունքը, և դադարները վերացնելու դեպքում այն կզրկենք ուժեղ արտահայտչամիջոցից (էջ 291):

Ուսույի երաժշտական հայացքները լուրջ մտորումների տեղիք են տալիս: Նրա հանճարեղ մտքերը վկայում են այն մասին, որ իր ապրած դարաշրջանից շատ ավելի առաջ էր անցել: Լեզվական և երաժշտական համակարգերի մասին դատողությունները որոշակի ձեռքբերումներ են ոչ

միայն երաժշտագիտության, այլև ժամանակակից լեզվաբանության համար: Սակայն նրա արտահայտած մտքերից շատերը դեռևս չեն արժանացել խոր ու համակողմանի ուսումնասիրության և հետազոտողին նորովի զարգացման հնարավորություն են ընձեռում ժամանակակից լեզվաբանության լույսի ներքո:

СВЕТЛАНА ВАРДАНЯН – Жан-Жак Руссо о взаимоотношении языковых и музыкальных систем. – Великий французский мыслитель, просветитель и энциклопедист Жан-Жак Руссо оставил значительный след в истории французской музыки как композитор и музыковед.

Его рассуждения о языке и музыке представляют большой интерес не только для музыковедения, но и для современной лингвистики. Они не потеряли своего значения по сей день и предоставляют возможность исследователю по-новому развивать их в свете современной лингвистики.

SVETLANA VARDANIAN– Jean Jacques Rousseau on the Interrelation of Language and Music Systems.– Jean Jacques Rousseau, a great French thinker, enlightener and encyclopaedist, has left a deep trace in the history of French music as a composer and a musicologist. His views on language and music make a valuable contribution not only to musicology but also to modern linguistics. His ideas have not been devalued up to now and enable the researcher to develop them anew in the light of modern linguistics.